

ՏԵՏԻՍ ՊԱՏՄՈՒՄԸՆՔԸ

Քունս չէ գալիս, իմ աղնիւ տատի,
Դու էլ չես բնում. գէթ հետս խօսիր,
Թող վառարանը հանդարտ ճարճատի,
. Խսկ դու անցեալից մի բան ինձ պատմիր:
Վառարանի մօտ իմ տատը նստած
Գուլպայ էր գործում: Գիշերը երկար,
Դուրսը ցուրտ ձմեռ, քամին կատաղած
Բաղիսում էր գուռը. գոռում անդադար:
Երկար ծիչանով կրակը խառնեց,
Ապա բարձրացաւ տատս իւր տեղից,
Մօտեցաւ դէպ ինձ, ճակատս շփեց
Ասաց. «Հար աչք է անցել քո զլինից»:
Ու ինձ մօտ նստեց, խաչ հանեց կրծքին,
Խոր յօրանջելով, ինձ էլ իաչ բաշեց.
Սերտած աղօթքներ բերաւ իւր մտքին,
Խաչակնքելով, բոլորը կնկնեց:
Լոեց. ու գուլպան վեր առաւ նորից,
Զեռս շոյելով, «ի՞նչ պատմեմ» հարցրեց:

— Հէքեաթ չեմ ուզում: Պատմիր քո կեանքեց.
Քո հարսանիքը ի՞նչպէս կատարուեց:
Հեգնական ժպիտ խաղաց շրթունքին,
Շարժեց գլուխը, իէթ ինձ նայելով,
«Այ! թէ ի՞նչ պատմել այս իմ թոռնիկին»:
Կայաց շշնչաց, գուլպան հիւսելով:
Յանկարծ ականջը տատիկս բորեց,
Ասաց. «Նշան է երկինք բացուելուն».
Ապա անցեալներ նա մտաբերեց,
Ցիշել սկսեց մարած օրերուն:

— Անցան մեր ոսկի օրերը, անցան.
 Կմ խեղճ թռանիկներ, ձեզ բաժին չեղաւ.
 Ոչ ուրախ կեանքի, ոչ երջանկութեան,
 Այժմ աշխարհի վառ փայլը կորաւ:
 Ամեն ինչ փոխուեց դատարկ ձեւերի.
 Վերացաւ Աստծու առատ օրչնութիւն.
 Հոգի ու հաւատ ծախուեց փողերի,
 Ուստի և Տիրոջ իջաւ բարկութիւն:
 Լուսաւորութեան միայն անունով
 Տղայ թէ աղջիկ բոլոր փշացան,
 Անչիմն ուսման ունայն պատրանքով
 Իրանք դեռ փոքր, բայց մեծ ձևացան.
 Ո՞ւր են վաղեմի հայի աղջիկներ,
 Որ սուրբ պատկառանք պայծառ դէմքերին:
 Վարել են իրանց տների հոգսեր,
 Նեղութիւն կրել նման քաջերին:
 Հարսներ են դարձել, մանուկներ ձնել,
 Առողջ ու կայտառ իրանց ստինքին
 Մեծացրել են, սուրբ կաթով անել
 Ու տղամարդիկ տուել աշխարհին:
 Շատ բան է փոխուել մեր աղջիկներից:
 Տկայ մինչև իսկ այն գեղեցկութիւն.
 Այն կրակ աչքեր, թշեր վարդերից,
 Արշալոյս ժպիտ, խօսքը բաղցրութիւն:
 Իսկ մեր տղերքը ինչպէս հսկաներ
 Պատկւում էին բսան տարեկան,
 Իրանց պէս սիրուն առնելով հարսներ,
 Միշտ վառուած պահում օջախն հայրական:
 Ի՞նչպիսի հասակ, ի՞նչ կայտառ դէմքեր,
 Ի՞նչ խրոխտ հայեացք, ձայներ բաղցրալից.
 Ա՞մ. ի՞նչ լայն թիկունք, ի՞նչպիսի կրծքեր,
 Կարծես բոլորը ձուլուած մարմարից:
 Եւ այն կրծքի տակ ի՞նչ սիրտ դգայօւն.
 Զեռներ միշտ մեկնած իրանցիդ թոյլին,
 Իրանք գթառատ, կամքով անընկճուն.
 Հաւատը պայծառ, սէրը կաթողին:
 Հաղար երանի անցած օրերին.
 Միշտ երջանկութեան մեջ էինք ապրում.

Քաղցրութեամբ լեցուն կարմիր սրտերին
 Այժմ սև գարդեր որդնի պէս ձնշում։
 Սեղան չենք նստել առանց հիւրերի։
 Մինչ իսկ կերակուր պատրաստած համով
 Նախ բաժանել ենք խեղճ աղբատների
 Ապա թէ ճաշել բաղցրալից սրտով։
 Թէ ուրախութեան և թէ տրտմութեան
 Հարեանները իրար մասնակցել,
 Օրհնելով ծէրին ամմն մի բերան,
 Եւ միշտ գոհունակ սրտով աղօթել։
 Բայց վայ ձեզ Խեղճե՞ր։ Անարդ ձեւերի
 Անմիտ ստրուկներ։ Չեր սիրտը նեղուած
 Կանգնած էք մօտը խաւար փոսերի,
 Եւ սէր և հաւատ անդունդը ձգած։
 Է՛, իմ բաղցրիկ թոռ. բեղ ես ի՞նչ պատմեմ.

Դէ՛. բաւական է. բո բոլոր խօսքեր
 Ես լաւ հասկացայ, սիրելի տատիկ,
 Ինձ ոչ միայն քուն, այժմ բիւր մտքեր
 Գլխիս մէջ գարձան վրդովուած ալիք։

ԱՐՃԱԿ ԿԱՅՆՈՒՆԻ